

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՔՐՈՆԿՐԵՍԸ ԿԸ ՆՃԷ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՕՐԸ ԵՒ ԿՈՉ ԿՈՒՂՈՒ ԵՌՆ. ՂԱՐԱՐԱՂԻ ՎԵՐԱՄԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ՈՒՍԵՐԻՆԿԹՆ. — Ծերակուտականներ և Քոնկրետիստներ
յարգանք մատուցին 20րդ դարու առաջին ցեղասպանութեան զոհ
դացած 1.5 միլիոն հայերու յիշատակին՝ Ապրիլի վերջին երկու
շաբաթներու ընթացքին, Ծերակոյտի և Ներկայացուցչական
Տան մէջ իրենց ունեցած ելոյթներով:

Ներկայացուցչական Տան մէջ, հայաստան եօթ նահանգներէ
Քալիֆորնիայէն, Մեսչուսէցէն, Նիւ Եորքէն, Միչիգէնէն,
Նիւ Ճըրզիէն և Մերիլենտէն՝ 17 քոնկրետիստներ խորհրդի
ուղղեցին ընդունիլ Հայկական Յեղասպանութիւնը և վերանայ
բողոքին Ապրիլի 24ը Յեղասպանութեան համերկրային յիշատակման
օր հռչակելու կոչուած բանաձև մը վաւերացնելու վերաբերեալ
իրենց յանձնառութիւնը:

Ծերակոյտին մէջ, ծերակուտականներ Քարլ Լեւինը, Տոմ
նալտ Ռիկընը և Փոլ Սայմընը, յատուկ ելոյթ ունեցան՝ անդ
բաղաոնալով Հայկական Յեղասպանութեան:

Ամերիկայի Հայկական Համագումարը, ըստ իր վարչական
տնօրէն Ռոս Վարդեանի, օժանդակութիւն և նիւթեր հայթայթ
թեց Ներկայացուցչական Տան և Ծերակոյտի որոշ անդամներու
որոնք մասնակցեցան յարգանքի այդ յատուկ ելոյթներուն:

Քոնկրէսի միակ հայածին անդամ Չարլզ Փաշայեանը կարգ
մակերպած էր Ներկայացուցչական Տան մէջ Ապրիլի 28ին զոհ
յացուած Հայ Նահատակաց Օրուան յատուկ ելոյթները: Իր
խօսած ճառին մէջ Փաշայեանը նշեց, թէ հակառակ թուրքերի
կողմէ զեկաւարուած ժխտողական բուռն արշաւին, ամերիկեան
հայ համայնքը անցեալ տարուան ընթացքին մի քանի յաջողու
թիւններ էր արձանագրած:

«Միացեալ Նահանգներու Ողջակիզման Յիշատակման
Խորհուրդը հաստատեց Հայկական Յեղասպանութեան ներառու
մը իր թանգարանին և կրթական ծրագիրներուն մէջ», ըսաւ Չ.
Փաշայեանը: «Քալիֆորնիա, Քոնեքիքթ, Մեսչուսէց, Նիւ Եորք
և Նիւ Ճըրզի նահանգները 24 Ապրիլ 1988ը յիշատակեցին որպէս
Հայ Նահատակաց Օր և իրենց օրէնսդիր մարմինները բանաձև
ներ անցուցին այդ առնչութեամբ»:

«Նման յաջողութիւններ ևս կարելի է նշել մեր երկրի
երկրորդական դպրոցներուն մէջ՝ Ողջակիզման, Յեղասպանու
թեան և մարդկային իրաւունքներու վերաբերեալ դասաւար
դիրներ մտցնելու հետզհետէ աճող շարժման մէջ», ըսաւ Փաշայ
եանը:

«Մինչ մեր միլիոնաւոր քաղաքացիներուն իրենց նահա
պային կառավարութիւններու կողմէ կոչ կ'ըլլայ անդրադառնալ
հայկական ողբերգութեան և մինչ տասնեակ հազարաւոր աչա
կերտներ կը սերտեն Հայկական Յեղասպանութիւնը, Քոնկրէսի
մէջ մենք մեր մասնակցութիւնը չենք բերեր», ըսաւ Փաշայեանը:
«Այս Մարմինը պէտք է անդրադառնար այդ դարու բո
լոր ցեղասպանութիւնները յիշատակելու վերաբերեալ մեր հա
սարակութեան մէջ առկայ մղումին և մեր անվճարակամու
թեան»:

Քոնկրէսէն Սենատը Լեւինը բանաձևի վաւերացման
ջանքերը բնութագրեց իրրեւ «ճշմարտութեան աւետման առաքե
լութիւն»:

«Ոմանց համար, Հայկական Յեղասպանութեան անտեսու
մը քաղաքական որոշում մըն է, որովհետեւ անոնք էր վախճան,
որ այս բանաձևեր կ'անարդէ ժամանակակից թուրքերը», ըսաւ
Լեւինը: «Ուրիշներու համար, Հայկական Յեղասպանութիւնը կը
մնայ որպէս պատմական բանավէճ: Սակայն իւրաքանչիւր շար
թուան և ամսուան թաւալումով, մենք կը կորսնցնենք այդ ող
բերգութեան մնացեալ վկանները: Մենք թէ՛ մահացածներուն և
թէ՛ մնացածներուն պարտական ենք այդ յիշատակը յաւիտեանս
պահպանելու»:

Հայկական Յեղասպանութեան թիւ 132 բանաձևի հեղի
նակ, քոնկրէսէն Ռիչըրտ Լեւնտընը ըսաւ, թէ թէև Քոնկրէսը
անցեալ ամառ չվաւերացուց այդ բանաձևեր, սակայն «այդ բա
նաձևեր վաւերացնելու ուղղութեամբ մեր պայքարի վախճանը չի
հասած»:

«Այսօր ևս կը յիշատակեմ անոնք, որոնց կեանքերը խլուե
ցան 1915-23 տարիներուն՝ այնքան անխիղճ կերպով: Ես կը յու
սամ, որ ապագային մեր կառավարութիւնը կը միանայ մեզի,
որպէսզի մենք իրրեւ ժողովուրդ կարենանք ճանչնալ Հայկական
Յեղասպանութեան ողբերգութիւնը՝ փոխանակ ընկրկնելու այլ
և այլ քաղաքական ճնշումներու առջեւ», ըսաւ ան:

Քոնկրէսէն Տէյլրա Պոնիորը, միանալով առաջինին,
քննադատեց Միացեալ Նահանգներու կառավարութիւնը, որով
հետեւ թոյլատրած է որ քաղաքական նկատառումները ողղէին
Հայկական Յեղասպանութեան պատմական արձանագրութեան
վրայ:

«Մեր երկիրը, ներկայ վարչակարգի օրով խճողուած է
այնպիսի բանավէճի մը մէջ, թէ արդեօք յանուն դիւանադատու
թեան պատմական դէպք մը պէտք է ջնջել, թէ ոչ», ըսաւ քոնկ
րէսէն Պոնիորը: «Պարոն նախագահ, Հայկական Յեղասպանու
թիւնը յիշատակելով մենք Խորհրդի ժամանակակից կառավար
ութիւնը պատասխանատու նկատած չենք ըլլար Օսմանեան
կայսրութեան գործունէութեան համար, ինչպէս որ Արեւելեան
կամ Արեւմտեան Գերմանիաները պատասխանատու չենք նկատ
ուեր Երրորդ Ռայխի գործունէութեան համար, այստայարեց
ան(*)»:

Ներկայացուցչական Տան և Ծերակոյտի անդամները այդ
պատեհութիւնը օգտագործեցին Խորհրդային Միութեան կողմ
ուղղելու որ Ղարաբաղի հայերու դիմումին ի նպաստ որոշում
կայացնէ:

«Վերջերս Ատրպէյճանի Սուճկայիթ քաղաքին մէջ հակա
հայկական խռովութիւններ տեղի ունեցան՝ Ղարաբաղը Հայաս
տանի Խորհրդային Հանրապետութեան միացնելու վերաբերեալ

(*) Անշուշտ, հայերս երբեք չենք կրնար համաձայն ըլլալ
այսպիսի պնդումներու: - Ծ. Խ.

հայկական պահանջին պատճառով», ըսաւ քոնկրէսմէն Սելիլըմ
Լիլիմսքին: «Այդամիջեան ատելութեան եւ հակամարտութեան
մերօրեայ այս արտայայտութիւնը պէտք է միանդամայն շքա-
ցնէ մեր ունեցած պատրանքները, թէ աշխարհի այլ շրջանին «էջ
հայերու կացութիւնը բարւօք դասաւորուած է»:

Գեմոկրատներու հակակշռին տակ պանուոյ ներկայա-
ցուցչական Տան մէջ երրորդ ամենաբարձր պաշտօնը ունեցող
քոնկրէսմէն Թոնի Քոէլոն ըսաւ, թէ Խորհրդային Միութեան մէջ
հայերու հայրենիքի շարունակուող բաժանումը «Յեղասպանու-
թեան վերջը թարմ կը պահէ բոլոր հայերու սիրտերուն ու միտ-
քերուն մէջ»:

Քոնկրէսմէն Սթենի Հոյլը, որ Եւրոպայի Անվտանդու-
թեան եւ Համադորձակցութեան Միացեալ Նահանգներու Յանձ-
նաժողովի ատենապետն է, ըսաւ, թէ «յարաձուն մտահոգու-
թեամբ կը հետեւի հայ ժողովրդի այս ճգնաժամին»:

«Հակառակ խորհրդային ղեկավարութեան այն հաւաս-
տիքներուն, թէ հանրային կարծիքը հաշուի պիտի առնուի, հո-
ղային հարցի վերաբերեալ միակ որոշումը եղաւ ... յայտարա-
րութիւն մը, թէ անտեսական ծրագիր մը առաջադրուած է այդ
շրջանին համար», ըսաւ Հոյլը: «Կառավարութեան մը եւ ժողո-
վուրդի մը միջեւ յարաբերութեան հիմքը պէտք է ըլլայ երկրի
բաղկացուցիչ անհատներու կամ խմբաւորումներու իրաւունքնե-
րու յարգանքը, ըլլան անոնք կրօնական, ազգային, ցեղային
կամ քաղաքացիական խմբաւորումներ: Մենք կրնանք եւ պէտք
է պահանջենք առնուազն այդ վերաբերումը»:

Ծերակուտական Լեւինը, որ Մարտի սկիզբը հանդիպում
ունեցաւ Կորպորացիի հետ եւ արձարձած Ղարաբաղի հայերու
պահանջը, ըսաւ թէ յուսախար էր խորհրդային կառավարու-
թեան որոշումով:

«Ես չեմ կարծեր թէ Պր. Կորպորացի կրնայ յաւիտեանս

անտեսել հայ ժողովուրդին պահանջները», ըսաւ Լեւինը: «Սուժ-
կայիթի խռովութեանց եւ սպանութիւններու պատասխանատու-
ները արդարութեան առջեւ պէտք է կանգնեցուին: Իսկ Ղարա-
բաղի հայ մեծամասնութեան կողմէ արտայայտուած պահանջը
պէտք է շօշափելի կերպով ճանչցուի»:

Ծերակուտական Ռիկըլը իր ձայնը միացուց Լեւինին, Ղա-
րաբաղի հայութեան խնդրանքին աւելի լուրջ ուշադրութիւն
դարձնելու կոչ ընելով:

Ծերակուտական Լեւինը ըսաւ, թէ Մ. Նահանգներու կա-
ռավարութիւնը եւ Քոնկրէսի անդամները կրնան օգնել այս
հարցով «Խորհրդային Միութեան տեղեկացնելով, թէ մենք մեծ
կարեւորութիւն կ'ընծայենք Ղարաբաղի կացութեան նկատմամբ
իրենց վերաբերումին»:

«Այդ շրջանի հայութեան համար մարդկային իրաւունք-
ներու պայքարը կը շարունակուի ցայսօր եւ անոնք արժանի են
մեր աջակցութեան», ըսաւ Ռիկըլը: «Ամբողջ աշխարհ միաձայն
կերպով պէտք է պահանջէ ցեղասպանութեան սոսմական վա-
ւերականութեան հաստատումը, որպէսզի հնարաւոր դառնայ
ներկայի մարտահրաւէրներու ղիմազրաւումը: Մենք պէտք է
դատաստարտենք օսմանեան թուրքերու կողմէ հայ ժողովուրդի
դէմ դործուած ցեղասպանութիւնը եւ պէտք է սպահովենք այդ
ողբերգութեան իրականութեան պահպանումը, որպէսզի սպա-
ղայ սերունդներուն խնայուին անցեալի արհաւիրքները»:

Հայ նահատակաց օրուան առթիւ ելոյթներ ունեցան նաև
քոնկրէսմէններ՝ Ռապըրթ Թորիչեւլին, Ֆրանք Անունդիօն, Սա-
մուէլ Սթրաթընը, Էտուրտ Պոլլենտը, Քարլոս Մուրֆօսը, Թո-
մաս Մանթընը, Ուիլիլմ Ֆորտը, Նորմըն Մինեթան, Մեթիու
Մարթինէզը եւ Էսթեպան Թորրէսը:

Գ Ի Ի Ա Ն

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ